

Ամուսնութիւնն ի սկզբանէ անտի վաճառականութեան գլխաւոր ճիւղերէն մին համարուած է:

Աշխարհիս վրայ չկայ երկիր մը, բաղաբ մը, գիւղ մը, խրճիթ մ'ուր գոյութիւն չունենայ այս առևտուրն:

Վաճառականական օրինաց այն տրամադրութեան համեմատ որ քսան տարեկանէ վար եղողներուն կարգիլէ վաճառականութեամբ զբաղիլն, անչափահասներն չեն կրնար ամուսնանալ և ի դիմաց նոցին փոխանորդաբար կը կարգուին նոցա խնամակալներ:

Անոնք որ մեծ դրամագլխոյ տէր են, մեծ քանակութեամբ կը գնեն և կը վաճառեն, իսկ անոնք որ փոքր դրամագլուխ ունին, պղտիկ քանակութեամբ գործ կ'ընեն:

Բազումք մեծ հարստութիւններ կը գիղեն այս առևտուրէն և բազումք կը անանկանան:

Ապրանքի ընտրութիւնն մեծ կարևորութիւն ունի առևտրական այս ճիւղին մէջ:

Աղջիկներ կան որ մէկ անգամ լուացուելով իրենց գոյնը կը ընտեն, ինչպէս կան մանչեր, որ տկար հիւսուածք ունին և քիչ ժամանակի մէջ կը մաշին և կը պատուուին:

Սպիտակն և կարմիրն միւս գոյներէն աւելի յարգի համարուած լինելով շատ վաճառականներ իրենց ապրանքներն այդ գոյներով կը ներկեն և յաճախորդներն կը խաբեն:

Յաճախորդներուն մէջ կայ նաև ստուար մաս մ'որ թուի գոյնն նախապատիւ կը համարի, և վաճառականք ու մանք այդ գոյնն ալ կը նենգեն շատ անգամ:

Ուստի այս և ասոնց նման ուրիշ բազում կեղծ ու պատիր խաբէութեանց չզոհուելու համար սովորութիւն եղած է, մանաւանդ վերջերս, միջնորդներու առաջնորդութեամբ ամուսնանալ:

Այս ծանօթութիւններն տալէն յետոյ դառնանք պ. Կուռնելիոսին որ զուրսէն նոր եկած է ամուսնանալու համար և պանդոկ մ'իջևանած է:

Պ. Կուռնելիոս երեսուն երեսունը մէկ տարեկան մարդ մ'է միջակ հասակով: Դէմքն ոչ համակրելի է և ոչ հակակրելի, չեղոք դիրք մ'ունի: Երկար պճնաւոր մը և երկար արծաթագոյն վերարկու մը կը հագնի և մէջքը գօտի կած է:

Բարեպաշտ և աստուածավախ անձ մը լինել կըթուի, միշտ իւր բովի բարձին վրայ ունի Զէն հոգեւոր մը, որուն վրայ կըգտնուի իւր քթախոտի տուփն: Ամեն առաւօտ 'նարեկացիէն բանի մը գլուխ կըկարդայ բարձրաձայն, առանց մոռանալու իւր ոսկեզօծ սաղմոսն իւր զործք առաքելոցն զորս մետաքսեայ թաշկինակի մը մէջ կըպահէ մեծ խնամով: Պ. Կուռնելիոս պարզ մարդ մ'է որտեղ և մտքով և այն կարծիքն ունի թէ ամեն մարդ իրեն պէս ստեղծուած է, ուստի քիչ մը դիւրահաւան է և ամենուն խօսքին կըհաւատայ առանց խորհրդածելու և դատելու:

Պանդոկ իջնալուն հետեւեալ օրն հմայից դիմեց, բարեկամաց ոմանց խրատներուն անսալով, պակկայ նետել տալու և հասկնալու համար թէ ամուսնութեամբ երջանիկ պիտի ըլլայ թէ թշուառ: Հաղորդուեցաւ իրեն թէ սեւ աչերով, սեւ ընթուիներով, կարմիր երեսով, յունական քիթով — գրաբառ յունարէն — փոքր բերանով, բարձրահասակ կին մը պիտի ունենար և երջանիկ պիտի ըլլար: Այս տեղեկութիւններն ստանալէն յետոյ գոհ սրտիւ դարձաւ իւր սենեակն ուր գտաւ տանի չափ կիներ, որ իրեն գալուստն իմանալով, փութացած էին գալ զինքն տեսնել:

Սենեակը մանելուն պէս պ. Կուռնելիոս շուարեցաւ մնաց սեմին վրայ ի տես այս կիներու որք ոտք ելնելով անմիջապէս դէպի իրեն դիմեցին բարի գալուստ մաղթելու համար: — Բարի եկար, Մեծապատիւ Կուռնելիոս, ըսաւ տիկին Ա. սկսելով անոր աջ ձեռքը թօթուել:

— Ներուամ կըխնդրեմ շոգենալին մէջ զձեզ չդիմաւորելուս համար, յարեց տիկին Բ... պ. Կուռնելիոսին ձախ ձեռքը թօթուելու սկզբնաւորութիւնն ընելով:

— Կըյուսամ թէ տունը ամենքն ալ աղէկ են, ձեր հայրը, ձեր մայրը, ձեր բոյրերն, ձեր եղբայրներն. աղէկ ըլլան, ողջ ըլլան, շարայարեց տիկին Ա... ձեռք թօթուելու շարունակելով:

— Կարծեմ թէ օրն սքանչելի էր և ծովային հաճելի ճամբորդութիւն մը ըրիք, աւելցուց տիկին Բ... հիւրին ձեռքն անընդհատ թօթուելով:

Պ. Կուռնելիոս մէյ մը տիկին Ա.ին կընայէր, մէյ մը տիկին Բ...ին և յետոյ միւս կանանց որ շրջապատած էին

զինքն սեմին վրայ և ձեռքը կուղէին թօթուելու համար:

— Բաւական է ա՛լ տիկին Ա. թող տուէր որ մենք ալ բարի գալուստ մաղթենք, պօռաց տիկին Գ... և տիկին Ա...ին ձեռքէն յափշտակեց պ. Կուռնելիոսին ձեռքն զոր սկսաւ թօթուել ուժով:

Տիկին Գ...ին օրինակին հետևեցաւ տիկին Դ... և տիկին Բ...էն կորզեց մարդուն ձեռքն զոր ցաւցնելու չափ ուժով սկսաւ շարժել:

Պ. Կուռնելիոս իւր ձեռքերն այս կանանց տրամադրութեանը յանձնած՝ անտարբերութեամբ կսպասէր իրաց վախճանին:

Ա... և Բ... տիկիները գնացին բազմոցի վրայ նստան:

Տիկին Գ. — Բարի գալուստ, պ. Կուռնելիոս, կաղօթեմ որ ուխտդ կատարուի ուղածիդ պէս և բախտաւոր ըլլաս: Երեկ առտու այս բանին համար յատկապէս եկեղեցի գացի և մոմ վառեցի:

Տիկին Դ. — Բարի մարդոց գործերը միշտ կը յաջողին, և դուք շատ բարի, ազնուական, վեհանձն մէկն էք, պ. Կուռնելիոս, արդարեւ առաջին անգամն է որ կը տեսնեմ զձեզ, սակայն ես մարդուն դէմքէն կը հասկնամ անոր ինչ բնաւորութեան տէր ըլլալը:

«Թոյլ տուէր որ մենք ալ կատարենք մեր պարտքը» աղաղակեցին տիկնայք Ե... և Ջ... և պղտիկ կսմթամարտէն ետքը յաջողեցան տիրել պ. Կուռնելիոսին ձեռքերուն:

Տիկին Ե. — Բարի եկար պ. Կուռնելիոս, ողջամբ եկար պ. Կուռնելիոս, ինչ որ դրած ես մաքիդ մէջը խէրով կատարուի պ. Կուռնելիոս, միշտ խնդաս պ. Կուռնելիոս, միշտ ուրախութեան մէջ տեսնեմ քեզի պ. Կուռնելիոս, քու աղէկութենէդ մենք ալ կօգտուինք պ. Կուռնելիոս:

Տիկին Ջ. — Բարով եկար պ. Կուռնելիոս, սիրելի եղբայրս. կը մաղթեմ որ աճապարանօք փնասակար գործ մը չընես, ասանկ գործերու մէջ լաւ խորհիլ և աղէկ կշռել պէտք է: Սիրելիդ իմ Կուռնելիոս, ես ուրիշ խօսք չեմ ընել:

Տիկին Է... և օրիորդ Ը... ինչպէս նաև Թ... և Ժ... տիկիներն նոյնիմաստ բարեմաղթութիւններով իրենց պարտականութիւնն վճարեցին պ. Կուռնելիոսին և իրենց պաշտօնակիցներուն քով բաղմեցան:

Աւելորդ չէ նշանակել թէ բանի մը կիներ պ. Կուռնելիոսի թեւը մտան և անկիւնն բաղմեցուցին զայն:

Պ. Կուռնելիոս շուարած բանի մը վայրկեան կիները դիտելէն ետքը թեմալէքիի բսակն հանեց և միջնորդներուն դառնալով հարցուց.

— Մէյմէկ նարկիլէ կըխմէ՞ք:

Կիները խնդացին բրբիջով:

— Ինչո՞ւ խնդացիք, հարցուց պ. Կուռնելիոս պաղարեամբ:

— Որովհետեւ մենք նարկիլէ չենք խմեր, պատասխանեցին կիներն միաբերան:

— Շարկիլէ չեմողները կըխնդան այս քաղաքին մէջ:

— Ոչ... բայց... որովհետեւ... իրաւ որ մեր խնդալն պարապ բան է, կարծեմ ձեր քաղաքը կնիկները նարկիլէ կըխմեն:

— Կան որ կըխմեն կան որ չեն խմեր... բայց նարկիլէ խմելը...:

Տիկին Ա. — Նարկիլէ խօսքը մէկդի դնենք պ. Կուռնելիոս... իմ հոս գալուս պատճառը հարկաւ գուշակած էք. ես կարգուել ուղողներուն աղջիկ կը գտնեմ և...:

Տիկին Բ. — (ընդմիջելով) Ես ալ, պ. Կուռնելիոս, աղջիկ և ինչ գեղե...:

Տիկին Գ. — (ընդմիջելով) Իմ արհեստս ալ այս է, ձեռացս տակ անանկ աղու...:

Տիկին Դ. — (ընդմիջելով) Դուն ինծի մօտիկ ըրէ, պ. Կուռնելիոս,.... տատրակի պէս...:

Տիկին Ե. — (ընդմիջելով) Ինչո՞ւ բեղի պիտի մօտիկ ընէ եղբ... ազամանդի պէս աղջիկներ կը բե...:

Տիկին Զ. — (ընդմիջելով) Ի՞նչ պարկեշտ և ուսումնական աղջիկներ ունիմ ես... անանկ դաշնակ կը զարնեն և անանկ կը պարեն որ կարծես թէ մէյմէկ հրեշտ...:

Տիկին Է. — (դարձեալ ընդմիջելով) Երեսուն տարիէ ի վեր այս արհեստին մէջն եմ և այն ամեն անոնք որոնց աղջիկ գտած եմ, գոհ եղած են և...:

Տիկին Թ. — (ընդմիջելով) Ես ինքզինքս չեմ գովեր, թող կուտամ որ գործերս խօսին. իմ գտած աղջիկներս տասներկու զաւակ կը բերեն և միշտ տասնեւութ տարեկան կը կարծուին. կին ըսածդ ալ ասանկ ըլլալու է որ...:

Նորէն ընդմիջումներ:

Տիկին Ժ.—Պ. Կուռնելիոս գիտէ թէ մեր մէջ ո՛րն վարպետ է այս գործին մէջ, զինքը մտիկ ընենք նայինք, ի՞նչ կարծիք պիտի յայտնէ:

Կուռնելիոս.—Բայց նաւրկիլէ խմբն անվայել բան մը չէ կարծեմ որ ասանկ խնդացիք վրաս:

Տիկին Ժ.—Բան մ'էր անցաւ գնաց, անոր վրայ խօսելն աւելորդ է, իսկ եթէ շատ վիրաւորուեցար, մեր խնդալը յետս կը կոչենք:

Կուռնելիոս.—Ի՞նչ ըսել է յետս կոչել:

Տիկին Ժ.—Այսինքն իբրեւ չեղեալ համարել:

Կուռնելիոս.—Իբր չեղեալ համարելով ի՞նչ կըլլայ:

Տիկին Ա.—Որպէս թէ դուն մեզի հարցուցած կըլլաս թէ նաւրկիլէ կը խմէ՞ք և մենք ալ խնդացած չենք ըլլար:

Կուռնելիոս.—Այդ ի՞նչ խայտառակութիւն է. ես աըղայ եմ որ խաբուիմ թէ չխնդացիք:

Տիկին Բ.—Ատոր վրայ խօսիլը չարժեք, պ. Կուռնելիոս. հրամանքդ ի՞նչ տեսակ աղջիկ կուզես, անոր վրայ խօսինք:

Տիկին Բ.—Ամեն տեսակ աղջիկ ունիմ ձեռքիս տակ, պ. Կուռնելիոս, եթէ կը հաճիք հրամեցէք, երթանք մէկիկ մէկիկ ցուցնեմ ձեզի:

Եւ տիկին Բ.—Պ. Կուռնելիոսին թեւէն քաշելով բազմոցին վար կիջեցնէ զայն:

Օրիորդ Ը.—Ո՞ւր կը տանես մարդը:

Տիկին Բ.—Գուցէ բեզի վստահութիւն չունի: Օրիորդ Ը.. Կսկսի պ. Կուռնելիոսին միւս թեւը քաշել:

Տիկին Գ.—Շիտակն ես ասանկ աներեսութիւն տեսած չունիմ, խեղճ մարդուն թեւերը պիտի փրցունեն:

Միւս միջնորդներն ալ կսկսին պոռալ. կռիւն կը մեծնայ. հայհոյութիւնն կսմթի կը փոխուի, կսմթն կռուփի, կռուփն կիցի, այս իրարանցումին մէջ պ. Կուռնելիոսն մէյմը ասդին կը քաշեն մէ, մը անդին:

Աղմուկն կը մեծնայ. վեր կը վազէ պանդոկապետն և

կը կանգնի միջնորդներուն մէջ տեղը որ սկսած էին կոշիկի հարուածներ իջեցնել իրարու գլուխ:

— Զէք ամէնար, չէք խպնիր, կը պողայ պանդոկապետը. ինչ խայտառակութիւն է աս: Դուրս ելէք ամենքդ ալ, չպիտի կարգուի այդ մարդը:

Կուռնելիոս. — Չպիտի կարգուիմ ես, դուրս ելէք:

Պանդոկապետ. — Կարգուած է ան, և բանի մը զաւակներ ալ ունի:

Կուռնելիոս. — Այո կարգուած եմ ես և բանի մը զաւակներ ալ ունիմ: Ողջ ըլլաս, պ. պանդոկապետ, որ վրայ հասար և շունչ առնել տուիր ինձ, այս կնիկները պիտի խղդէին զիս:

Պանդոկապետն կը յաջողի սենեակէն դուրս հանել կնիկներն և բարեկամաբար կը յորդորէ պ. Կուռնելիոսն որ զգուշանայ անոնցմէ և հաւատք չընծայէ անոնց խօսքերուն:

Պ. Կուռնելիոս շնորհակալութիւն կը յայտնէ պանդոկապետին և կը խոստանայ անոր խրատներով գործելու:

Կէս ժամ կանցնի:

Տիկին Գ... Պ. Կուռնելիոսին սենեակը կը մտնէ:

— Շատ ցաւ զգացի, կըսէ, քիչ մը առաջ տեղի ունեցած անցքին վրայ: Ես վարժուած չեմ ասանկ բաներու, եամարդու զաւակ եմ, բաղաբաժարութիւն սորված եմ յիշելու: Կընիկներուն բարեւ տալն անգամ իմ պատուոյս կը դպչի. ահ, չէք գիտեր, պ. Կուռնելիոս, որքան ստորին արարածներ են անոնք:

— Ինձի ալ շատ ստորին արարածներ երևեցան:

— Խարդախ են:

— Այո:

— Լիրբ են ամենքն ալ:

— Ես պիտի ըսէի:

— Հիմա հրամանեղ ինձի մտիկ ըրէ, բայց վստահութիւն ունեցիր վրաս. մի՛ վախնար, չեմ խաբեր քեզի: Միայն ըսէ ինձ թէ ի՞նչպէս աղջիկ կուզես:

— Սեւ աչքերով, սեւ ընթուիկներով, պզտիկ քիթով, բարձր հասակով աղջիկ մը կուզեմ:

— Եիշտ ուղածիդ պէս հատ մը կայ ձեռքիս տակը:

Վաղը վեց ու կէսին ատենները կուգամ, քեզի կառնեմ, մէկ տեղ կերթանք և աղջիկը կըտեսնես:

— Շատ աղէկ, շնորհակալ եմ. աւելի կ'անուխ չ'ըրրա՞նար ըլլալ:

— Ձէ, ընդհանրապէս ութին միջոցները կերթան աղջիկոտեսի, վեց ու կէսին եթէ ելնենք ասկից ութին աղջը կան տունը կը գտնուինք:

— Բանի որ անանկ է, ի՞նչ ընենք, ըսածնիդ պէս ըլլայ:

— Ա՛յս հագուստներով պիտի երթաս:

— Եթէ կուզես սև չուխայէ շալւարս և ֆըստոքը ծիւլալէս կը հագնիմ, գլուխս ալ նազմաս կը կապեմ, անանկ կերթանք:

— Բանի թալոն, սեթրի չէս կրնար հագնիլ:

— Ձէ, չէ, չէ.....:

— Բիշ մը ֆրանսերէն գիտե՞ս, պ. Կուռնելիոս:

— Ամենէին չեմ գիտեր:

— Սանկ պօսիժուր մը, ատիկոս մը մօնշեր մը ըսելու չափ գոնէ.....:

— Վաղը չե՞նք կրնար սորվիլ անոնք շուտ մը:

— Ներեցէ՛ք, հրամանքնուդ գործն ի՞նչ է, ի՞նչ առուտուրով կը զբաղիք:

— Տոկոսով ստակ կուտամ ուղողներուն:

— Շատ լաւ, վաղը կուգամ, կերթանք: Ա՛լ ուրիշին խօսքն ականջ մի՛ կախեր:

— Ո՞վ ականջ կը կախէ այդ ստորին արարածներուն և իրբերուն:

— Ապրիս: Վաղը անպատճառ կուգամ, մնաք բարով:

— Երթաք բարով:

Տիկին Գ. — Սենեակէն ելած ժամանակն դրան քով կը տեսնէ Տիկին Է. — Ն, որ ապրանքի տախտակէ սնդուկի մը վրայ նստած էր և առանց բարեկեցութեան զայն կանցնի կերթայ:

Տիկին Ը. — Ն կը ներկայանայ պ. Կուռնելիոսին:

— Նորէն բարի լոյս պ. Կուռնելիոս:

— Դուրս, դուրս, դուրս.....:

— Ի՞նչ կայ պ. Կուռնելիոս.....:

— Դուրս կըսեմ կոր քեզի, դուրս ելիր:

— Ինչ պատճառաւ... :

— Պատճառ կը հարցնես դեռ, ստորին արարած :

— Ե՞ս :

— Խարդախ :

— Ե՞ս :

— Լիբբ :

— Ե՞ս :

— Ձեզի բարե տալն մարդոյս պատուոյն կը դաշի :

— Հասկցայ, հասկցայ. ինչ ընեմ որ ես ազնուական եմ և ուրիշներուն ետեւէն խօսելու սովորած չեմ. կարծեմ հիմայ ասկից ելնող կինն, անշուշտ զքեզ խաբելու համար, զիս բամբասած է : Բայց թող գիտնայ այն կինն որ թող չպիտի տանք իրեն որ զքեզ խաբէ և թշուառացնէ :

— Անիկայ մարդու զաւակ է :

— Այնպէս կըսէ ինք, մէյմալ ուրիշներուն հարցուր : Քանի քանի տուններ կործանեց, քանիներու դժբախտութեան պատճառ եղաւ, անանկ կնկան մը հետ խօսիլն իսկ վնասակար է, բայց ինչուս պէտք... :

— Գէշ կնիկ է :

— Ինձ գիտցած մի՛ ըլլար, պ. Կուռնելիոս, բայց ան-կից գէշ կնիկ գտնել խիստ դժուար է :

— Իրա՞ւ կրսես :

— Ստախօսին մէկն է, բայց ինձ գիտցած մի՛ ըլլար :

— Ինձի ալ շատ ճշմարտախօս չերեցաւ այդ կինը :

— Քանիներու յիսուն տարեկան աղջիկներ կ'լեցուցեր է քսանը հինգ տարեկանի տեղ, բայց կաղաչեմ, ինչ գիտցած մի՛ ըլլար, ես ասանկ ստորին բաներու կարևորութիւն տալով անոնց վրայ խօսիլ չեմ ուզեր, իմ կրթութիւնս թող չտար որ խօսիմ :

— Կրթեալ կնիկ մ'ալ ասանկ ըլլալու է :

— Ձեմ ուզեր ըսել, բայց շատ սառնասյ կնիկ է :

— Ասանկ է անանկ. ես ալ այն կարծիքէն եմ :

— Տունդ փլցնելու համար եկած է քեզի :

— Շատ աղէկ ըսիր, ճիշտ այն նպատակաւ եկած է :

Լաւ համոզուեցայ :

— Հիմա, պ. Կուռնելիոս, դուք կարգուիլ կուզէք, սյնպէ՞ չէ՞ :

— Այո կարգուիլ կուզեմ:

— Կը գովեմ զքեզ, մարդս կարգուելու է....:

— Ծնողքս ալ այնպէս ըսին:

— Բայց հասկնալ կուզեմ նախ թէ ինչու համար պիտի կարգուիս:

— Ինչո՞ւ համար.... ի՞նչ գիտնամ, ամեն մարդ ինչո՞ւ համար կը կարգուի.... կարգուելու համար:

— Ի՞նչ նպատակաւ կը կարգուիս:

— Կնիկ մ'ունենալու համար:

— Լաւ: Հասկցայ միտքդ: Ի՞նչ տեսակ աղջիկ կուզէք ուրեմն:

— Սեւ աչքերով, սեւ ընքուկներով, պզտիկ բերնով և քիթով և բարձր հասակով աղջիկի մը պէտք ունիմ:

— Գլխուս վըայ:

— Այո, ասանկ աղջիկ մը:

— Ձեր ուզածին պէս աղջիկ մը կայ. եթէ հաճիք վաղը երթանք տեսնելու զայն:

— Երթանք:

— Ընդհանրապէս եօթնուկէսին կամ ութին միջոցները աղջիկ կը հանեն ի տես, վաղը վեցուկէսին հոս կը գլուխուիմ և մէկ տեղ կերթանք:

— Շատ աղէկ:

— Խօսքիդ վըայ հաստատ ես, այնպէս չէ՞:

— Այո, շատ հաստատ եմ:

— (ձեռքը թօթուելով) Ձեռք բարով ուրեմն:

— Երթաք բարով... ձերքներդ որչափ փափուկ է, տիկին:

— Խնդալու խօսքեր կընես պ. Կուռնելիոս, ձեռքիս փափկութիւնն է Ձեռքեր, հարսութեանս տեսնէիր դուն իմ ձեռքերս.... ո՞հ, տարիները, տարիները.... վաղը վեցուկէսին:

— Այո՛:

Տիկին Ե.... կը մեկնի:

Պ. Կուռնելիոս առանձին մնալով նարկիլէն կը լեցնէ և կսկսի քաշել:

Քառորդ մը կանցնի և ահա սենեակին դուռը կը բացուի և կը մտնէ օրիորդը.... որուն երեսէն յիսուն յուլիսներ, հրատապ ամիսներ, անցած են:

— Ի՞նչ կուզէք, տիկին, կը հարցնէ պ. Կուռնելիոս, քիչ մը խստութեամբ:

— Կը նախատէ՞ք զիս պ. Կուռնելիոս:

— Նախատելու բան չըկայ հոս. ինչու եկաք:

— Այդ բառն չվայելեցուցի ես ձեզի, սիրտս վիրաւորելու համար անկէ աւելի սպորտսուր բառ մը չէիք կրնար գործածել:

— Ի՞նչ կը ծախես:

— Տիկին ըսէք ինձի, մինչդեռ գիտնալ հարկ էր թէ ես օրիորդ եմ, այսինքն դեռ կարգուած չեմ:

— Ա՞տ է եղեր ծանր բառը. մեղայ. ես բեզ մեղայ, մէմալ չեմ ըսեր օրիորդ: Ի՞նչ կուզէք օրիորդ, ի՞նչ գործ ունիք հոս օրիորդ:

— Հասկնալ կուզէի թէ քանի տարեկան աղջիկ կուզէք:

— Ես չպիտի կարգուիմ օրիորդ:

— Պիտի կարգուիք և այն ալ խաբեբայ միջնորդներու առաջնորդութեամբ, և կարգուելէն շաբաթ մը յետոյ պիտի լաք ձեր անխոհեմութեան վրայ և պիտի ըսէք, «ինչու օրիորդ Ը...ին խօսքը մտիկ չըրի...»:

— Ո՞րոնք են խաբեբայ միջնորդները:

— Այս առաւուսն կիներուն բոլորն ալ խաբեբայ են, անոնք երկու կողմէն ստակ առնելու համար միայն կը հոգնին, իրենց հոգը չէ եթէ հարսանիքէն շաբաթ մը վերջը պրը կինէն կը զատուի, անոնք թէ այրն կերեն և թէ աղջիկը, անոնք մէկ-մէկ հրեշներ են... անոնք....

— Ի՞նչ կը լսեմ տէր Աստուած:

— Անոնք անուշ խօսքերով կը թունաւորեն մանչերը և աղջիկներն. աղջիկներն մանչերուն կը գովեն և մանչերն աղջիկներուն. սուա կը խօսին, երևակայական հարստութիւններ կը խոստանան երկու կողմի դրամ կառնեն և թըշուառութեան կը վաճառեն:

— Ես ալ անանկ բան մը նշմարեցի այդ կանանց վրայ:

— Աւելի լաւ է որ մարդ մ' ոտքը բար մը կապէ և ինքզինքն ծովը նետէ քան թէ անոնց վստահի:

— Այնպէս է. շատ փնասակար էակներ են անոնք, քանի մը ոսկու համար ուրիշներուն անդորրութիւնը կը վթղովեն:

— Ուրեմն զգոյշ կեցիր:

— Ո՞վ կարևորութիւն կուտայ անոնց խօսքին: Շիտակն խօսելով դուք շատ պարկեշտ և պատուաւոր աղջիկ մ'էք:

— Ձեմ գիտեր, բայց ստորնութիւն չեմ ընդուներ: Ո՛հ, պ. Կուռնելիոս, չեմ կրնար արտասուքս զսպել երբ կը խորհիմ թէ ի՞նչ վիճակի պիտի ենթարկուէիր եթէ անոնց միջնորդութեամբ աղջիկ մը առնէիր. ո՛հ, այս աղջիկն իբրև գերի, իբրև ստրուկ պիտի գործածէր զքեզ... առտու իրիկուն գլուխդ պիտի ցաւցնէր... պիտի բարկացնէր զքեզ և մահդ պիտի փութացնէր: Ասանկ կնիկէ մը զքեզ ազատելու համար է որ եկայ քեզի հետ առանձին տեսութիւն մը ընելու:

— Ընորհակալ եմ. մեծապէս շնորհակալ եմ:

— Պ. Կուռնելիոս, պարկեշտ և համեստ աղջիկներ շատ կան, միայն թէ գտնելը դժուար է... ա՛հ (ծուռնկի վրայ) ներէ ինձ որ անկեղծութեամբ խօսիմ հետդ, ահ... կըսիր...:

— Հ՛է...:

— Կը սիրեմ զքեզ:

— Կը սիրես մի զիս, ինչո՞ւ համար:

— Ձգիտեմ, մաքնիսական ի՞նչ զօրութիւն ունիս վրադ որ սիրտս քեզի ձգեցիր մէկ անգամ միայն տեսնուելով հետս:

— Աս ի՞նչ կըսէ:

— Ո՛հ, սիրելիդ իմ Կուռնելիոս, մի մերժեր այն սէրն որ իւր ոտքով կուգայ և կըննրկայանայ ձեզ, սէր մը որ սրտէ մը կըմկնի, սէր մը որ երջանկութիւն կըբուրէ, սէր մը որ առանց միջնորդի կըյայտանէ ինքզինքն:

— Ի՞նչ խօսքեր են ասոնք, չեմ հասկնար:

— Ըսէ ինձ, պ. Կուռնելիոս, թէ կըսիրես զիս:

— Դուրս ելիր:

— Սըկէ հունա չեմ երթար, եթէ չսիրես զիս՝ մահուան պատճառ պիտի ըլլաս, ձեռքովդ գերեզման պիտի իջեցնես զիս:

— Տէր ողորմա, Տէր ողորմա...:

— Մարդասպան պիտի ըլլաս...:

— Տէր Աստուած... ի՞նչ փորձանք...:

— Ես բաւականատէր աղջիկ մ'եմ, շատ հագուստ չեմ ուղեր, քիչ ծախքով հարսանիքը կըկատարենք, կեննենք կերթանք, սիրուն դաւակներ կուեննանք...:

— Գընա սըկէց կըսեմ քեզի, անպիտան:

— Վստահ, չպիտի երթամ, ծեծէ՛ զիս, չպիտի պռամ, զարկ սրտիս, ձայն չպիտի հանեմ. քեզի նուիրուած եմ ես...:

— Ես նուէր չեմ ուզեր... կորի սըկէ...:

— Կորի՛ սըկէ... կորի՛ սըկէ... կորի՛ սըկէ... անգուժ... աս'հ... մարեղիք կուգայ վրաս... քիչ մը ջուր...:

— Աս ի՛նչ անտանելի փորձանքի հանդիպեցանք... դիմանալու բան չէ... ոտքէն քաշելու դուրս նստելու է լիրբը, աղջիկ գանելու համար է եկեր՝ ինքզինքն կ'լլեցնելու կաշխատի կոր. ի՛նչ աներես աղջիկ... մարեցաւ ինչ եղաւ:

Գաւաթ մը ջուր կ'առնէ և քիչ մը ջուր կը սրսկէ երեսը: Օր. Ը... աչքերը կը բանայ:

— Շնորհակալ եմ, կըսէ, ինձի համար տարած խնամքդ գրաւական մ'է առ իս ունեցած սիրոյդ... ուրախ եմ որ սէրս չըմբռնեցիր: Ոհ, պ. Կուռնելիոս, կաղաչեմ, վերցուր զիս և բազմոցին վրայ պարկեցուր, վրաս ալ աղէկ մը ծածկէ, որովհետեւ դող մը կզգամ:

— (Մէկուսի) Հիմա գործերնիս կարգի մտաւ... խելքէս մաքէս չէր անցնէր ասանկ փորձանք մը... գետնին տակն անցնի, բարով խերով սենեակս չմանէր:

Պ. Կուռնելիոս օր. Ը... ին թեւը կը մտնէ և կը տանի բազմոցին վրայ կը պարկեցնէ զինքն:

— Մեծապէս շնորհակալ պիտի ըլլայի, կըսէ օրիորդն պարկած տեղը, եթէ բժիշկ մը շրկէիր ինձի պ. Կուռնելիոս: Կուռնելիոս. — Երթամ բժի՛շկ կանչեմ...:

Օրիորդ Ը. — Ա՛հ սիրելիդ իմ Կուռնելիոս (այս պահուն պանդոկապան սենեակ կը մանէ) չես գիտեր թէ սէրն որքան ախտերու աղբիւր է. քանի քանի աղջիկներ մեռած են իրենց սէրը մերժուած ըլլալուն պատճառաւ: Սիրելիդ իմ Կուռնելիոս, կեանքս ձեռացդ մէջ է... կըսիրեմ զքեզ:

Պանդոկապետ. — Բարեւ ձեզ...:

Կուռնելիոս. — Հրամայէք, պ. պանդոկապետ, նստեցէք:

Պանդոկապետ. — Ո՛չ, նստելու համար չեկայ: Գիտէք պ. Կուռնելիոս որ այս պանդոկին մէջ գտնուող անձերուն ամեն ալ վաճառական են:

Կուռնելիոս. — Այո՛:

Պանդոկապետ. — Մանաւանդ պատուաւոր վաճառականներ:

Կուռնելիոս. — Այնպէս է:

Պանդոկապետ. — Ուստի թող չեմ կրնար տալ որ ձեր գայթակղելի ընթացքն շարունակէք և իմ տունս փլցնէք, հիմայ, անպատճառ հիմայ դուրս ելնելու էք այս պանդոկէն: Ես զբեղ պարկեշտ և պատուաւոր գաւառացի մը կարծեցի...:

Կուռնելիոս. — Ի՞նչ ըրի որ...:

Պանդոկապետ. — Ամիսն հարիւր ոսկի ալ տաս չեմ ընդունիր անանկ բան:

Կուռնելիոս. — Բայց...:

Պանդոկապետ. — Ես քու կարծած պանդոկապետներէն չեմ, քառասուն տարի է որ այս գործով կզբաղիմ:

Կուռնելիոս. — Ձեմ հասկնար ինչ ըսել կուզես:

Պանդոկապետ. — Բաւական պինդ երես ունենալու ես որ չհասկնաս — ո՞վ է հոն պարկողը...:

Կուռնելիոս. — Կի՛ն մ'է որ ինձի աղջիկ գտնելու համար եկաւ ու հիւանդանալով պարկեցաւ...:

Պանդոկապետ. — Պարապ տեղը մի ջանար զիս համոզելու. ես գիտեմ գործին ինչ ըլլալը, դու կը կարծես թերևս թէ պանդոկապետն չգիտէր զբեղ և անտարբեր կընստի երբ կին մը երեք ժամ սենեակիդ մէջ կըգտնուի: Շուտ ըրէ, սնտուկդ և անկողինդ ա՛ն և գնա ասկեց, ապա թէ ոչ ոստիկանութեան ձեռքով դուրս կը նետեմ զբեղ:

Կուռնելիոս. — Այս խօսքերէդ բան մը չեմ հասկնար:

Պանդոկապետ. — Պ. Կուռնելիոս, այս պանդոկը սիրոյ պանդոկ չէ, գնա՛ ուրիշ տեղ սիրէ՛:

Կուռնելիոս. — Ո՞վ կըսիրէ...:

Պանդոկապետ. — Երկար կընէք, ձեզի հետ շատախօսութիւն ընելու ժամանակ չունիմ:

Կուռնելիոս. — Այդ կինը դուրս ըրէ որ ինքզինքն կուզէ ինձ սիրցունել:

Պանդոկապետ. — Ի՞նչ կըսէ այս, տիկին...:

Օրիորդ Ը. — (Որ մինչև այն ատեն գլուխն վերմակին տակ քաշած քնանալ կը ձևացնէր) Ես տիկին չեմ, գաւառացի ալ չեմ. ուստի դիմացինդ լաւ ճանչցիր և այնպէս խօսէ՛:

Պանդոկապետ. — Շատ լաւ, ի՛նչ գործ ունիս հոս:

Օրիորդ Ը. — Այդ քու գիտնալու բանդ չէ:

Պանդոկապետ. — Իմ գիտնալու բանն է:

Կուռնելիոս. — Այո՛, իր գիտնալու բանն է:

Օրիորդ, — Չե՛մ սիրեր զիս պ. Կուռնելիոս:

Կուռնելիոս, — Չե՛մ սիրեր:

Օրիորդ Ը. — Շատ լաւ, ես կերթամ, կառք մը բերել տուէք որ երթամ. որովհետեւ կարողութիւն չունիմ:

Կուռնելիոս, — Ինչո՞ւս պէտք:

Օրիորդ Ը. — Ինչո՞ւ պէտք, կերելի որ հրամանքդ Պօլսոյ սովորութիւններուն տեղեակ չես. ոչ միայն կառքի վարձքն պիտի վճարես, այլ նաեւ պարտաւոր ես բժշկի և դերձի ծախքերն ալ հոգալ մինչև որ ոտք ելնեմ. այս սենեակին մէջ հիւնդցայ ես. եթէ հոս չգայի՝ չպիտի հիւանդանայի, ապա ուրեմն դու ես պատասխանատուն:

Տիկին Ա. — (Մանելով) բարեւ ձեզ.... աղուռ....

Պանդոկապետ. — Պ. Կուռնելիոս բնաւ պարտականութիւն չունի բեզի ստակ տալու:

Օրիորդ Ը. — Ես տասն ոսկի չառած սենեակէն դուրս չեմ ելներ. ասկէ ծագելիք հետեանքներն ալ կրնաք գուշակել պ. Կուռնելիոս....

Տիկին Ա. — Աղուորիկ աղջիկ մը կայ բեզի յարմար պ. Կուռնելիոս:

Պանդոկապետ. — (Ցած ձայնով առ Կուռնելիոս) Ասոր քանի մը ոսկի տանք ու ճամբենք, որովհետեւ կրնայ ձեր գլուխը փորձանքներ բերել:

Տիկին Բ. — (Մանելով) բարեւ պ. Կուռնելիոս, հարուստ աղջիկ մը....:

Կուռնելիոս. — Ո՛ր մէկուն պատասխանելու է:

Պանդոկապետն հինգ ոսկի կառնէ պ. Կուռնելիոսէն և օր. Ը. ին տալով սենեակէն դուրս կը հանէ զայն որ բարձրաձայն կը պօռայ.

«Կուռնելիոս, Կուռնելիոս, ինձի ըրած չաբութեան կրկինը գտնաս Աստուծմէ, աշխարհի վրայ չիմդաս, ինչ որ բռնես հող դառնայ, առնելիք կնիկդ տունովդ տեղովդ փրձացնէ զբեզ, ողորմութեան կարօտ մնաս....»

Պանդոկապետն մեծ նեղութեամբ կը յաջողի պանդուկէն հանել այս միջնորդ օրիորդը:

Տիկին Ա. — Հոգ մի ըներ, պ. Կուռնելիոս, այդ աղ-

ըիկն ամենուն հետ այդ եղանակով կը վարուի.... հարուստ օրիորդ մը միտքս ինկաւ քեզի համար:

Տիկին Ա.—Խօսքս մի կարեր տիկին Բ.... առաջ ես խօսիմ, ետքն ալ դուն խօսէ՛. անանկ չէ՛ պ. Կուռնելիոս, ըսածս, կանոնաւոր չէ՞:

Կուռնելիոս.—Շատ կանոնաւոր խօսք է:

Տիկին Բ.—Ես ալ կըսեմ որ դորժ ունիմ պիտի երթամ, անոր համար առաջ ես խօսիմ. այս խօսքի մէջ ան կանոնութիւն մը կ'այ:

Տիկին Ա.—Ես կը փափագիմ որ իմ ցոյց տալիք աղջիկս տեսնէ առաջ, և կարծեմ թէ այս փափաքս օրինաւոր է:

Տիկին Բ.—Կուզեմ որ առաջ իմն ներկայացնելիք օրիորդս տեսնէք:

Կուռնելիոս.—Ձեր փափաքին մէջ ալ օրինաւորութեան հակառակ բան չեմ տեսներ:

Տիկին Բ.—Ուրեմն ես կերթամ: Պատրաստուեցէք վաղը աղջիկ տես երթալու ժամն ու թիւն ատենները:

Կուռնելիոս.—Շատ լաւ:

Տիկին Բ.—Մնաք բարով:

Կուռնելիոս.—Երթաք բարով:

Տիկին Ա.—Կը զարմանամ որ անանկ միջնորդներու կարեւորութիւն և խօսք կուտաք, վաղը հոս կուգամ, ան գամ մը կը տեսնէք իմ առաջարկած աղջիկս:

Կուռնելիոս.—Ես ալ ան պիտի ըսէի, վաղը եկուր և անգամ մը տեսնեմ ձեր առաջարկած աղջիկը:

Տիկին Ա. կը մեկնի:

Հետզհետէ կուգան և հետեւեալ օրն ժամն ու թիւնն ատեններն աղջիկ տես երթալու խօսք առնելով պ. Կուռնելիոսէն կերթան միւս միջնորդներն որ պանդոկին մէջ մէյ մէկ ծակ պատուրած էին:

Պ. Կուռնելիոս իւր հիւրերն ճամբելէ յետոյ բազմօցին վրայ անկիւնը կը նստի և կը խորհի. թէ ինչ պատրաստութիւններ տեսնել հարկ է հետեւեալ աւուր աղջիկ տեսի համար: Այս ժամու չափ մտածելէ յետոյ, յանկարծ հայելիի առջև կերթայ կը կանգնի: Կը քննէ իւր հագուստն և անոր ձևն, և կորոշէ որ եւրոպական ձևով ձեռք մը լաթ գնէ. արդէն բարեկամներէն ոմանք այս խորհուրդն

տուած էին իրեն: Ուշի ուշով կը զննէ մազերն ու պեխերն
 և զանոնք կտրելու և եւրոպական ձևի բերելու հարկը կը
 զգայ: Պանդոկապետը կը կանչէ և կաղաչէ անոր որ ընկե-
 րանայ իրեն, ձեռք մը լաթ գնելու համար: Պանդոկապետը
 կը հաւանի, մանաւանդ կը յորդորէ զինքն որ ադա-
 մանգեայ մատանի մ' և ոսկի ժամացոյցով շլթայ մ'ալ
 գնէ, յայտնելով թէ փեսացուներուն մատներուն և բաձ-
 կոնին մեծ կարեւորութիւն կը տրուի: Փեսացուն հաւանու-
 թիւն կուտայ և պանդոկապետին հետ կերթայ կը գնէ
 հանդերձեղէնն և գոհարեղէնն որոյ համար կը վճարէ իւր
 եօթանասուն և ութն ոսկի: Բանի մը օրուան մէջ ֆրան-
 սերէն ուսնիլ ալ պէտք է: Օրէնսորֆը վեց ամիսէն կը
 սորվեցնէ. դասատու մը բոլորովին նոր և դիւրուսոյց եղա-
 նակաւ երկու ամսուան մէջ կուսուցանէ: Ասոնց և ոչ մե-
 կէն պ. Կուռնելիոս կրնայ օգտուիլ: Նա կուզէ որ գոնէ
 շաբթուան մը մէջ անսխալ գրէ և խօսի: Այս փափաքն
 յագեցնելու յուսով գրավաճառի մը խանութը կերթայ:

— Բիչ ժամանակի մէջ ֆրանսերէն գրել և խօսիլ սոր-
 վեցնող գիրք մ' ունիք:

— Այո, ունինք գիրք մը որ վաթսուն դասի բաժ-
 նուած է, և եթէ ամեն օր դաս մը պատրաստէք, երկու
 ամսուան մէջ անսխալ կը գրէք, կը խօսիք, և մեծ հեղի-
 նակներն դիւրութեամբ կը հասկնաք:

— Եթէ օրը աասը դաս առնեմ վեց օրուան մէջ չեմ
 կրնար սորվիլ:

— Ինչու չկարենաք սորվիլ, աշխատութեան վրայ է
 գործը. եթէ քիչ մ'աւելի աշխատիք և օրը բաժն դաս պատ-
 րաստէք՝ երեք օրուան մէջ ալ կրնաք սորվիլ, լեզուներու
 ուսուցիչ շատ դիւրացած է հիմա:

— Օրը երեսուն դաս առնելով երկու օրուան մէջ կըր-
 նամ սա գործին տակէն ելնել:

— Այո, ինչո՞ւ չէ, մանաւանդ թէ օրերն երկար են հիմա:

— Այդ գիրքէն հատ մը տուր ինձի:

— Գլխուս վրայ:

— Գինն ի՞նչ է:

— Կէս արծաթ, տասն դահեկան:

— Շատ ազէկ:

Պ. Կուռնելիոս դիւրուսոյց քերականութիւնն կառնէ
և սենեակը կերթայ:

Նոյն գիշերը քանի մը ժամ կը կարդայ, և բնոյն մէջ
մինչև առաւօտ ինքն իրեն կը հարցնէ և կը պատասխանէ:

«—Դրացոյս բամբակէ ատրճանակն ունիս:

—Այո, պարոն, ունիմ զայն:

—Հօրս թղթեայ վառարանն ունի՞ս:

—Ո՛չ պարոն, չունիմ զայն,

—Ո՛վ ունի իմ դերձանէ նաւս:

—Եղբայրս ունի:

—Պանիրէ ձիս ո՞ւր է:

—Մածունէ կառք մ'ունիս:

—Այո, պարոն, ունիմ:

Հետեւեալ առաուն արթնանալուն պէս Նարեկացիէն
գլուխ մը կը կարդայ և անմիջապէս կը ձեռնարկէ նոր գլած
զգեստներն հագնելու գործին: Պանդոկապետին աջակցու-
թեամբ կը յաջողի զգեստաւորուիլ, միայն փողպատն կա-
պելու համար երիտասարդ մը կը կանչուի որ ազգասիրա-
բար յանձն կառնէ այս զոհողութիւնն:

Պ. Կուռնելիոս հագուած շքուած կը պտըտէր սենեակին
մէջ երբ դուռը բացուելով եօթանասնոց գաւառացի մը մտաւ:

—Բարի ես եկեր, բարի ես եկեր, պ. Կուռնելիոս,
ըսաւ բմծիծաղով:

—Բարի առաքեցար, Համբարձում աղբար, պատասխա-
նեց պ. Կուռնելիոս:

—Աս ի՞նչ կերպարանք է, բարեկամ:

—Ասանկ պէտք եղաւ:

—Թող տուր, Աստուածդ սիրես:

—Ինչո՞ւ:

—Ինչո՞ւ... սա ի՞նչ անճուռնի հագուստ է:

—Եւրոպական է:

—Եւրոպական է... շիտակը ես ձեզի չվայելցուցի...

—Չե՞մ վայլեր կոր այս հագուստի:

—Հագուստը չվայլեր կոր ձեզի. սա ըանթօմիմանե-
րու մէջ մէկը չե՛լնե՞ր, երեսը ալիւրով ծեփած, ճիշտ ան
կը նմանի:

—Ամեն մարդ կը հագնի հապա:

—Ամեն մարդու ի՞նչ կը նայիս, դուն ինքզինքդ նայէ, հանէ՛, Աստուածդ սիրես, հանէ սա անձոռնի լաթերը:

—Խոստովանանք մնայ, աղջիկ տես պիտի երթանք այսօր:

—Գնա՛, միւս հագուստդ ինչ ունի, ատով շէնք շը-նորհք, կտրիճ, գեղեցիկ և մանաւանդ պարկեշտ մարդ կե-րեաս, այս հագուստով անձանաչ բան մ'իւս սեպէ թէ:

—Հանե՞մ կըսես:

—Հարցնելդ աւելորդ է:

—Իրաւ-անանկ է, հանեմ սա անպիտան հագուստը:

Բանթալոնն հանելով շալվարը կը հագնի:

—Ի՞նչպէս է:

—Սա քալթօն ալ նեւէ՛ և ծիւլալէդ հագիր:

Այս միջոցին նոր մարդ մ' ալ կուգայ:

—Հրամմեցէք, կըսէ պ. Կուռնելիոս, նստեցէք նա-յինք:

—Հրամմեցինք, առ ի՞նչ է, կէսը արեւելեան և կէսը եւրոպական ճաշակով հագուած էք:

—Չեր կարծիքն ի՞նչ է:

—Իմ կարծիքս եւրոպականին նպաստաւոր է:

—Ես հակառակ եմ, կը պատասխանէ Համբարձում աղբարը:

—Պիտի ածիլուի՞ք պ. Կուռնելիոս, կը հարցնէ սափ-րիչն որ ածելիներ և կոնք ի ձեռին դրան սեմին վրայ կե-րեայ:

—Այո, կը պատասխանէ պ. Կուռնելիոս և կը նստի աթոռի մը վրայ:

Սափրիչն մեծ խնամքով կածիլէ պ. Կուռնելիոսն և ա-նոր պէխերն ու մազերն նոր ճաշակի համաձայն կը ձևէ ու կը կտրէ:

Պ. Կուռնելիոս այս գործն ալ կատարելէն անմիջա-պէս յետոյ կսկսի ընդունել միջնորդներն որ ծովու ալեաց պէս զիրար մղելով կուգան:

Տիկին Թ. — Պ. Կուռնելիոս, իրիկուան պէս իրար չանց-նինք. ինձի խօսք տուիք որ այսօր երթանք աղջիկ-տեսի: Հրամմեցէք, երթանք:

Միւս միջնորդներն ամենը մէկէն:

— Ինչի ալ խօսք տուաւ:

— Կուռնելիոս. — Չկրնամք ըլլալ որ աղջիկներն հոս
բերէք:

Տիկին Գ. — Կատա՞կ կընէք, պ. Կուռնելիոս:

Տիկին Է. — Այո, պ. Կուռնելիոս զարմանալի մարդ մ'է,
ամենուն խօսք կուտայ:

Տիկին Դ. — Ի՞նչ ընէ խեղճ մարդը, ամենքդ մէկէն
վրան յարձակեցաք:

Տիկին Ը. — Ինչո՞ւ պիտի յարձակէինք, տէր ողորմա:

Տիկին Թ. — Հրամայեցէ՛ք, պ. Կուռնելիոս:

Միւս միջնորդները:

— Թող չենք տար պ. Կուռնելիոս: Մեզի հետ խաղա՞լ
կուղես: Տիկին Թ. կը բաշէ պ. Կուռնելիոսն մէկ կողմէն
որուն թւէն, ոտքէն, շալվարէն կը բաշեն միւս կիները:

Կուռնելիոս. — Աս ինչ խոյտառակութիւն է. աս ինչ
անտանելի բան է եղեր հոս աղջիկ տեսնելու երթալը:

Միջնորդներու խումբը. — Մենք բոլ խաղալիքդ չենք:

Կուռնելիոս. — Ամենուդ հետ ի՞նչպէս կրնամ գալ
միւսնորն ժամանակ, ինը կտո՞ր ըլլամ:

Միջնորդներու խումբը. — Կտոր կտոր ըլլաս. ինչու հա-
մար մեզի և աղջիկներուն տէրերուն ծախք ընել տուիր պա-
րօպ տեղը:

Համբարձում աղբար. — Ի՞նչ ծախք.:

Տիկին Թ. — Աղջիկ տես ելնելն առանց ծախքի կ'ըլլայ:
Հարկաւ պատրաստութիւններ եղան ան տունները, և պատ-
րաստութիւնները ձրի չեն:

Կուռնելիոս. — Ի՞նչ պիտի ընենք:

Տիկին Թ. — Ի՞նչ պիտի ընես, մեր ծախքերը պիտի տաս:
Իմ և ցոյց տալիք աղջկանս ծախքը չորս ոսկի է, կու-
տաս չորս ոսկին, բարի եկար հազար բարի:

— Հինգ ոսկի ալ ես կուզեմ:

— Վեց ալ ես:

— Նոյնքան ալ իմ ծախքս է:

— Չորս ու կէս ալ իմս է:

— Իմս ալ հինգէն քիչ մը պակաս է:

— Ես ալ երեք ու կէս կուզեմ:

— Չորս ոսկի ծախք ըրի ես:

— Զորս մէկ բառորդ ոսկի ալ ես ծախք ունիմ։
 Կուռնելիոս. — Ի՞նչ կըսեն ասոնք, Համբարձում աղբար։
 Ամենքը.

— Մենք մեր կողմէն Տիկին Թ. -ն փոխանորդ կը կար-
 գենք, անոր հետը խօսէ՛։

Տիկին Թ. — Այո, պ. Կուռնելիոս, ասոնց ծախքը տա-
 ու է, ուրիշ ճար չկայ, բղիկ բղիկ կընեն զբեղ։

Կուռնելիոս. — Ես ինչ յանցանք ունիմ որ... .

Տիկին Թ. — Յանցանքդ սա է որ ամենուհի ալ զատ
 զատ խօսք տուեր ես, անոնք ալ դացեր պատրաստութիւն-
 ւեր տեսեր են, պատրաստութիւնն ալ առանց ծախքի չըլլար։

Տիկին Ա. — Ասկէ վերջ երթալ ուզես իսկ բեղի աղ-
 ջիկ չեմ ցուցներ, անանկ ըսլլծոյով շալվար հագնող
 մարդուն համար աղջիկ չունիմ ես։

Տիկին Բ. — Ես ալ չունիմ։

Տիկին Գ. — Կարծէք թէ ես ունիմ։

Տիկին Թ. — Պ. Կուռնելիոս, գոհ ընելու ես այս տի-
 կիներն, եթէ ոչ չես կրնար հոս աղջիկ գտնել, անոնք
 կերթան կաւրեն բու անունդ։

Տիկին Ա. — Փողոցներու մէջ ծանուցում պիտի փակ-
 ցընենք թէ պ. Կուռնելիոս խենդին մէկն է։

Կուռնելիոս. — Եթէ ձեր ծախքը վճարեմ...

Տիկին Ա. — Այն ատեն ինչո՞ւ խենթ ըլլաս, մենք
 մարդ բամբասող չենք, մենք մարդու զաւակներ ենք։ Մենք
 անարատ կաթ ծծած ենք։

Համբարձում աղբար. — Ձեր ծծած կաթի մէջ շատ ջուր
 խառնուած է կարծեմ։

Տիկին Թ. — Պ. Կուռնելիոս, ժամանակ չանցունենք պա-
 րապ տեղ, որոշումդ տուր։

Պ. Կուռնելիոսը կը կանչէ պանդոկապետն որ նախ կը
 փորձէ անուշուրթեամբ ճամբել միջնորդներն և չյաջողելով
 բռնութիւն ձեռք կառնէ. վերջոյն մէջ ալ անյաջող կելնէ
 և կը համոզէ պ. Կուռնելիոսն որ դրամով գոհացնէ կիները։

Պ. Կուռնելիոս նորէն բսակին բերանը կը բանայ։

Միջնորդները գոհ կըլլան և կը մեկնին շնորհակա-
 լութիւն յայտնելով։

Ա. — Պ. Կուռնելիոսն ազնիւ մարդ է... :

— Զգացման տէր է...:

— Ազնիւ սիրտ ունի....

— Վեհանձն է...:

— Մեծանձն է...:

— Իրեն կին ունենալիք աղջիկը շատ աղէկ օրեր պիտի տեսնէ:»

Պանդոկապետ. — Կը ցաւիմ պ. Կուռնելիոս, որ ձեր դիւրահաւանութեան պատճառաւ պարապ տեղ կը վատնէք ձեր ստակներն: Կանխաւ իմացուցի ձեզի թէ ականջ կախելու չէ այս կանանց որ դիւրահաւան չեղողներէն իսկ ստակ կորզելու գիտութիւնն շատ լաւ ուսած են:

Կուռնելիոս. — Իրաւունք ունիս, ես պիտի ըսէի, այսչափ ստակ տուինք և դեռ աղջիկ մը չտեսանք:

Պանդոկապետ. — Անպատճառ կարգուիլ կուզե՞ս:

Կուռնելիոս. — Այո:

Համբարձում. — Անպատճառ ի՞նչ ըսել է, թերևս չը կարգուիր:

Կուռնելիոս. — Իրաւունք ունի Համբարձում աղբարն, թերևս չեմ կարգուիր:

Պանդոկապետ. — Նախ և առաջ որոշէ և յետոյ գործի սկսինք, բայց առանց ինծի խորհուրդ հարցնելու մի գործիր: Մնաք բարով:

Կուռնելիոս. — Շատ աղէկ, շնորհակալ եմ: Երթաք բարով:

Համբարձում. — Ես այս պանդոկապետին ընթացքին չը հաւնեցայ:

Կուռնելիոս. — Աղէկ ըսիր, արդէն ես ալ չեմ հաւնիր այս մարդուն ընթացքին, ինչ որ է, այսուհետեւ խոհեմու-թեամբ վարուելու է:

Կը խոստանանք յառաջիկային հրատարակել վէպի կամ թատերական ձևով պ. Կուռնելիոսին ամուսնութիւնը:

Թ. ՊԱՐՄՆԵԱՆ

(«Խիկար». 1884 № 2—3):